

**ՄԻԶԱՉԳՎՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԴԱՐԵՆԻ ԵԿ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒՅՈՒՐԻ  
ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(1-ին մաս)**

**ՆԱԽԱԳԲԱՆ**

**Պայմանավորվող կողմերը,**

համոզված լինելով պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հատուկ բնույթի, դրանց տարրերակիշ առանձնահատկությունների եւ տարրերակիշ լուծումներ պահանջող խնդիրների մեջ,

մտահոգվելով այս ռեսուրսների շարունակական եռոգիայով,

գիտակցելով, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները ընդիհանուր մտահոգություն են բոլոր երկրների համար, եւ որ բոլոր երկրները կախված են այլ վայրերում ծագած պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներից,

հաստատելով, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանումը, հետազոտումը, հավաքումը, հատկանիշների բնութագրումը, գևահատումը եւ փաստաթղթավորումը եապես կարենոր են Պարենի համաշխարհային անվտանգության մասին Հռոմի Հռչակագրում ամրագրված նպատակներին հասնելու եւ ներկա ու ապագա սերունդների համար գյուղատնտեսության կայուն զարգացման համար, եւ որ պետք է անհապաղ հզորացնել զարգացող երկրների եւ անցումային տնտեսությամբ երկրների հնարավորությունները՝ այդպիսի շանօթեր գործադրելու համար,

նշելով, որ Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման նպատակով գործողությունների գլոբալ նախագիծը միջազգայնորեն համաձայնեցված շրջանակ է այդպիսի գործողությունների համար,

այնուհետեւ հաստատելով, որ բույսերի գենետիկական ռեսուրսները պարենի եւ գյուղատնտեսության համար հանդիսանում են մշակովի բույսերի ժառանգականության բարելավման համար անհրաժեշտ հումք, լինի դա ֆերմերային տնտեսությունների մակարդակով սելեկցիայի մեթոդներով կամ ժամանակակից բիոտեխնոլոգիական մեթոդներով, եւ ունեն եական նշանակություն կլիմայի անկանխատեսելի փոփոխությունների եւ մարդկության ապագա պահանջների համար,

հաստատելով, որ անցյալում, ներկայում եւ ապագայում աշխարհի բոլոր տարածաշրջաններում եւ հատկապես զարգացման ու բազմազանության կենտրոններում ազարակատերերի ներդրումը պահպանման, կատարելագործման եւ այդ ռեսուրսների հատկացման հարցում հանդիսանում է ազարակատերերի իրավունքների հիմքը,

այնուհետեւ հաստատելով, որ տվյալ Պայմանագրում պահպանման, օգտագործման, տնտեսություններում պահպանված սերմերի փոխանակման ու վաճառքի եւ բազմացման այլ

նյութերի, պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործման հետ կապված որոշումների ընդունման ընթացքում մասնակցության, տվյալ օգտագործումից ստացված շահույթի արդար եւ հավասարաշահ բաշխման կապակցությամբ կիրառելի իրավունքներն ունեն հիմնարար նշանակություն ազարակատերերի իրավունքների իրականացմանն աջակցելու հարցում՝ ազգային եւ միջազգային մակարդակներով,

ճանաչելով, որ սույն Պայմանագիրը եւ նրան առնչվող այլ միջազգային համաձայնագրերը պետք է փոխադարձաբար աջակցեն գյուղատնտեսության կայուն զարգացման եւ պարենային անվտանգության համար,

հաստատելով, որ ոչինչ սույն Պայմանագրում չի ենթադրում որեւէ փոփոխություն այլ միջազգային համաձայնագրերով Պայմանավորվող կողմերի իրավունքներում եւ պարտավորություններում,

հասկանալով, որ վերոհիշյալ դրույթները ուղղված չեն սույն եւ այլ միջազգային պայմանագրերի միջեւ հիերարխիկ հարաբերությունների հաստատմանը,

գիտակցելով, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների կառավարման առնչվող հարցերը գտնվում են գյուղատնտեսության, շրջակա միջավայրի եւ առեւտրի սահմանագծում, եւ լինելով համոզված, որ այդ հատվածների միջեւ պետք է ապահովել համատեղ գործունեություն,

գիտակցելով իրենց պատասխանատվությունը ներկա եւ ապագա սերունդների առջեւ պարենի եւ գյուղատնտեսության համար աշխարհում առկա բույսերի գենետիկական ռեսուրսների բազմազանության պահպանման գործում,

ճանաչելով, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների նկատմամբ իրենց անկախ իրավունքները կիրառելիս պետությունները կարող են փոխադարձ շահույթ ստանալ այդ ռեսուրսների ընտրման համաձայնեցված մեխանիզմի մատչելիության համար գործող Բազմակողմ համակարգի ստեղծումից եւ դրանց օգտագործումից ստացված՝ արդար եւ հավասարաշափ շահույթի բաշխումից, եւ ցանկանալով կնքել միջազգային պայմանագիր Միավորված ազգերի կազմակերպության՝ Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության շրջանակներում (այսուհետեւ՝ ՊԳԿ՝ համաձայն ՊԳԿ կանոնադրության 14-րդ հոդվածի,

համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

## ՄԱՍ I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### ՀՐԴՎԱԾ 1. Նպատակները

1.1. Սույն Պայմանագրի նպատակներ են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանումը ու կայուն օգտագործումը եւ, գյուղատնտեսության կայուն զարգացման ու պարենի անվտանգության նպատակով, Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիային համահունչ, դրանց օգտագործումից ստացված շահույթի արդար եւ հավասարաշափ բաշխումը:

1.2. Այս նպատակներն իրականացվում են սույն Պայմանագրի եւ Միավորված ազգերի կազմակերպության՝ Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության եւ Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի միջեւ սերտ համագործակցության հաստատմամբ:

### ՀՐԴՎԱԾ 2 Տերմինների օգտագործումը

Սույն Պայմանագրի նպատակներով հետեւյալ տերմիններն ունեն ստորև իրենց վերագրված նշանակությունը: Այս սահմանումները նախատեսված չեն հումքային ապրանքների առեւտրում կիրառելու համար:

"In-situ պահպանում" նշանակում է՝ էկոհամակարգերի եւ բնակության վայրերի պահպանում եւ իրենց բնական միջավայրում տեսակների կենսունակ պոպուլյացիաների պահպանում եւ վերականգնում, իսկ տևայնացված եւ մշակովի տեսակների առնչությամբ՝ այն միջավայրում, որտեղ դրանք ծեռք են բերել իրենց տարրերակիչ հատկանիշները:

"Ex-situ պահպանում" նշանակում է՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանում իրենց բնակեցման տեղանքից դուրս:

"Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներ" նշանակում է՝ բուսական ծագմամբ ցանկացած գենետիկական նյութ, որը փաստացի կամ պոտենցիալ արժեք է ներկայացնում պարենի եւ գյուղատնտեսության համար:

"Գենետիկական նյութ" նշանակում է՝ բուսական ծագմամբ ցանկացած նյութ՝ ներառյալ ժառանգականության ֆունկցիոնալ միավորներ պարունակող՝ բազմացման համար

վերարտադրողական եւ վեգետատիվ նյութը:

"Սորտ" նշանակում է՝ բույսերի խմբավորում, որը մտնում է հայտնի ցածր կարգի

միասնական կենսաբանական տաքսոնի մեջ, որը սահմանում է իր տարրերակիչ եւ այլ գենետիկական հատկանիշների վերարտադրողական դրսերումը:

"Ex-situ հավաքածու" նշանակում է՝ իրենց բնական միջավայրից դուրս պահպանվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հավաքածու:

"Ծագման կենտրոն" նշանակում է՝ այն աշխարհագրական տարածքը, որը որեւէ բուսական տեսակ՝ տնայնացված կամ վայրի, առաջին անգամ ստացել է տարրերակիչ հատկանիշ:

"Մշակովի բույսերի բազմազանության կենտրոն" նշանակում է՝ աշխարհագրական տարածքը, որը բնութագրում է in-situ պայմաններում մշակովի բույսերի տեսակների գենետիկական բազմազանության բարձր մակարդակով:

### ՀՈԴՎԱԾ 3 Գործողության ոլորտը

Սույն Պայմանագիրն առնվում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին:

### ՄԱՍ II ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 4 Ընդհանուր պարտավորություններ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է իր օրենքների, կանոնակարգերի եւ ընթացակարգերի համապատասխանեցումը սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորություններին:

### ՀՈԴՎԱԾ 5

Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանում, հետազոտում, հավաքում, բնութագրում, գնահատում եւ փաստաթղթաբանություն

5.1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ազգային օրենսդրությանը համապատասխան եւ, անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող այլ կողմերի հետ համագործակցությամբ նպաստում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հետազոտման, պահպանման եւ կայուն օգտագործման համալիր

մոտեցմանը եւ, մասնավորապես, հարկ եղած դեպքերում.

ա) իրականացնում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հետազոտումն ու ապրանքագրում՝ հաշվի առնելով գոյություն ունեցող պոպուլյացիաների ներկա վիճակը եւ փոփոխականության աստիճանը, այդ թվում՝ նաեւ նրանց մեջ, որոնք կարող են օգտագործվել այն դեպքերում, երբ նրանց որեւէ վտանգ է սպառնում,

բ) աջակցում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների եւ այն բուսական գենետիկական ռեսուրսների մասին հավելյալ համապատասխան տեղեկատվության հավաքմանը, որոնց վտանգ է սպառնում, կամ որոնք կարող են օգտագործվել,

գ) անհրաժեշտության դեպքում աջակցում կամ սատարում է ազարակատերերի կամ տեղական համայնքների շանքերին, որոնք ուղղված են տնտեսություններում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների ռացիոնալ կառավարմանը եւ պահպանմանը,

դ) աջակցում է պարենի արտադրության համար in situ մշակովի բույսերի վայրի տեսակների եւ վայրի բույսերի պահպանությանը, ի թիվս այլոց՝ պահպանվող

շրջաններում աջակցություն ցուցաբերելու միջոցով, մշտական եւ տեղական համայնքի շահսրերով,

Ե) համագործակցում է ex situ արդյունավետ եւ կայուն պահպանաման համակարգի ստեղծմանը նպաստելուն՝ պատշաճ ուշադրություն հատկացնելով համապատասխան փաստաթղթաբանության, բնութագրման, վերականգնման եւ գնահատման անհրաժեշտությանը, եւ աջակցում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների կայուն օգտագործման համակարգի կատարելագործման նպատակով համապատասխան տեխնոլոգիաների մշակմանը եւ փոխանցմանը,

Գ) իրականացնում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների կենսունակության ապահովման, փոփոխականության աստիճանի

Ե) հավաքածուների գենետիկական ամբողջականության դիտարկում:

5.2. Պայմանագրի կողմերն անհրաժեշտության դեպքում քայլեր են ձեռնարկում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին սպառնացող Վտանգերը և վազագույշի հասցելու, իսկ եթե հնարավոր է՝ վերացնելու համար:

### ՀՐԴՎԱԾ 6

Բույսերի գենետիկական ռեսուրսների կայուն օգտագործումը

6.1. Պայմանավորվող կողմերը մշակում եւ իրականացնում են համապատասխան ռազմավարություն եւ ձեռնարկում են օրենսդրական միջոցներ, որոնք նպաստում են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների կայուն օգտագործմանը:

6.2. Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների կայուն օգտագործումը կարող է ներառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են.

ա) գյուղատնտեսության ոլորտում արդար քաղաքականության իրականացումը, որը անհրաժեշտության դեպքում օժանդակում է ազարակային քազմազան համակարգերի մշակմանը եւ հաստատմանը, որոնք բարելավում են գյուղատնտեսական կենսաբանական քազմազանության եւ այլ բնական ռեսուրսների կայուն օգտագործումը,

բ) հետազոտությունների աշխատացումը, որոնք բարելավում են պահպանում են կենսաբանական քազմազանությունը՝ ներտեսակային եւ միջտեսակային փոփոխականությունը մեծացնելով՝ ի շահ ազարակատերերի եւ առավելապես այն ազարակատերերի, ովքեր ստեղծում են օգտագործում են իրենց սեփական տեսակները եւ կիրառում են բնապահպանական սկզբունքներ հողի բերրիության պահպանման համար եւ հիվանդությունների, մոլախոտերի ու վնասատունների դեմ պայքարում,

գ) անհրաժեշտության դեպքում՝ այն բույսերի սելեկցիային օժանդակումը, որոնք ազարակատերերի օժանդակությամբ առանձնապես զարգացող երկրներում ուժեղացնում են

հատկապես սոցիալական, տնտեսական եւ բնապահպանական պայմաններին հարմարված, այդ

թվում՝ սահմանային շրջաններում տեսակների ստեղծման ներուժը,

դ) ազարակատերերի տրամադրության տակ գտնվող մշակովի բույսերի գենետիկական բազայի ընդլայնումը եւ գենետիկական քազմազանության շրջանակի մեծացումը,

Ե) անհրաժեշտության դեպքում՝ աջակցումը տեղական եւ տեղի պայմաններին հարմարված մշակաբույսերի, սորտերի եւ տեսակների օգտագործման ընդլայնմանը,

զ) անհրաժեշտության դեպքում՝ ռացիոնալ օգտագործման, տնտեսություններում մշակովի բույսերի պահպանման եւ կայուն օգտագործման գործընթացում սորտերի եւ տեսակների քազմազանության առավել լայն կիրառման օժանդակումը եւ մշակովի բույսերի խոցելիության եւ գենետիկական եռոգիայի նվազման նպատակով բույսերի սելեկցիայի եւ գյուղատնտեսական մշակումների միջեւ սերտ կապերի հաստատումը, ինչպես նաև, կայուն զարգացման հետ միաժամանակ, համաշխարհային պարենային արդյունաբերության մեծացումը, եւ

Ե) սորտերի արտահայտիչ եւ սերմսային նյութի բաշխումը կարգավորող սելեկցիաների եւ իրավիճակի ռազմավարության եւ կանոնակարգերի դիտարկումը եւ,

անհրաժեշտության դեպքում, հստակեցումը:

### ՀՈԴՎԱԾ 7

Ազգային պարտավորություններն ու միջազգային համագործակցությունը

7.1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտության դեպքում իր ռազմավարությանը եւ գյուղատնտեսության ու գյուղական տեղանքի զարգացմանը ուղղված ծրագրերում ներառում է 5-րդ եւ 6-րդ հոդվածներում նշված գործողությունները եւ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման հիմնախնդիրների շուրջ անմիջականորեն կամ ՊԳԿ միջնորդությամբ համագործակցում է Պայմանավորվող մյուս կողմերի եւ այլ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ:

7.2. Միջազգային համագործակցությունը ուղղված է, մասնավորապես.

ա) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ պարերական օգտագործման խնդրում զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների ներուժի ստեղծմանը կամ հզորացմանը,

բ) պահպանության, գնահատման, փաստաթղթաբանության, գենետիկական հզորացման,

բույսերի սելեկցիայի, սերմերի բազմացման խնդրում միջազգային օժանդակության ընդունմանը, ինչպես նաև, IV մասին համապատասխան, պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների համատեղ օգտագործման ոլորտում նաև անհրաժեշտ տեղեկատվության ու տեխնոլոգիաների հարցում դրանց տրամադրմանը կամ փոխանակմանը,

գ) 5-րդ մասով նախատեսված ինստիտուցիոնալ միջոցների ստեղծմանը եւ ուժեղացմանը, եւ

դ) 18-րդ հոդվածում նշված ֆինանսավորման ռազմավարության կիրառմանը:

### ՀՈԴՎԱԾ 8

Տեխնիկական օժանդակություն

Պայմանավորվող կողմերը համաձայնում են տեխնիկական օգնություն տրամադրել Պայմանավորվող կողմերին, հատկապես՝ զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրներին, երկողմ հիմունքների վրա կամ համապատասխան միջազգային կազմակերպությունների միջոցով՝ սույն Պայմանագրի կատարմանը օժանդակելու նպատակով:

### ՄԱՍ III ԱԳԱՐԱԿԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ

#### ՀՈԴՎԱԾ 9

Ազարակատերերի իրավունքները

9.1. Պայմանավորվող կողմերը ճանաչում են այն հսկայական ներդրումը, որն աշխարհի բոլոր տարածաշրջանների եւ հատկապես մշակովի բույսերի բազմատեսակության եւ ծագման կենտրոնների տեղական համայնքներն ու ագրակատերերը կատարել են եւ կշարունակեն կատարել՝ ողջ աշխարհում մննդի արդյունաբերության եւ գյուղատնտեսական այլ մթերքների հիմքը կազմող բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ զարգացման համար:

9.2. Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին վերաբերող՝ ագրակատերերի իրավունքների իրականացման պատասխանատվությունն ընկնում է նրանց ազգային կառավարությունների վրա: Իր պահանջներին եւ առաջնայնություններին համապատասխան՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, անհրաժեշտության դեպքում եւ

համաձայն իր ազգային օրենսդրության, ճեղնարկում է միջոցներ ազարակատերերի իրավունքների պաշտպանության եւ աջակցության համար, ներառյալ՝

ա) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին վերաբերող ավանդական գիտելիքների պաշտպանությունը,

բ) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործումից ստացված շահույթի հավասարաչափ բաշխմանը մասնակցելու իրավունքը, եւ

գ) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման հարցերի հետ կապված որոշումների ընդունմանն ազգային մակարդակով մասնակցելու իրավունքը:

9.3. Սույն հոդվածում նշինչ չի մեկնաբանվում որպես ազարակատերերի ցանկացած իրավունքը սահմանափակող բազմացման համար տևականություններում պահպանված սերմերի

Նյութերի պահպանման, օգտագործման, փոխանակման եւ վաճառքի համար՝ համաձայն ազգային օրենսդրության կամ անհրաժեշտության դեպքում:

ՀՐԱՄԱՆ 10

Մատչելիության եւ շահույթի բաշխման Բազմակողմ համակարգ

10.1. Պայմանագրովող կողմերն այլ պետությունների հետ իրենց հարաբերություններում ճանաչում են Նրանց ինքնիշխան իրավունքները պարենի Եւ գյուղատնտեսության համար իրենց բույսերի գենետիկական ռեսուրսների նկատմամբ, այդ թվում նաև՝ ճանաչում են, որ այդ ռեսուրսների մատչելիության որոշման լիազորությունը պատկանում է տվյալ երկրի կառավարությանը Եւ ենթակա է ազգային օրենսդրությանը:

10.2. Իրենց ինքնիշխան իրավունքներն իրականացնելիս Պայմանագրովող կողմերը համաձայնում են հիմնադրել՝ ինչպես պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիության ոյուրացման համար, այնպես էլ փոխլրացման եւ ամրապնդման հիմքի վրա ռեսուրսների օգտագործումից ստացված շահույթի արդար եւ հավասարաչափ օգտագործման արդյունավետ, գործուն եւ թափանցիկ համար:

ՀՐԱՄԱՆ 11

11.1. 1-ին հոդվածում նշված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանումը եւ կայուն օգտագործումը, ինչպես նաև դրանց օգտագործումից ստացված շահույթի արդար եւ հավասարաշափ բաշխումը ապահովելու համար Բազմակողմ համակարգը տարածվում է սննդի անվտանգության եւ փոխկախվածության չափանիշներին համապատասխան կազմված՝ 1-ին Հավելվածում թվարկված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների վրա:

11.2. 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված Բազմակողմ համակարգը ներառում է 1-ին Հավելվածում թվարկված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բոլոր բույսերի գենետիկական ռեսուրսները, որոնք գտնվում են Պայմանավորվող կողմերի հսկողության ներքո եւ հանրային սեփականություն են: Բազմակողմ համակարգի գործողության ոլորտն առավելագույնս ընդլայնելու նպատակով Պայմանավորվող կողմերն առաջարկում են 1-ին Հավելվածում թվարկված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի այլ գենետիկական ռեսուրսներ ուսեցողներին ընդգրկել պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական այդ ռեսուրսները Բազմակողմ համակարգի մեջ:

11.3. Պայմանավորվող կողմերը նաեւ համաձայնում են ձեռնարկել համապատասխան միջոցներ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին տիրապետող՝ իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց խրախուսելու համար, որ նրանք ներգրավեն այդ բուսական գենետիկական ռեսուրսները Բազմակողմ համակարգում:

11.4. Պայմանագրի ուժի մէջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում, Ղեկավար մարմինը գնահատում է 11-րդ հոդվածի 3-րդ կետում նշված Բազմակողմ համակարգում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների ներգրավման աշխատանքները: Տրված գնահատականների հիման վրա Ղեկավար մարմինը

որոշում է, թէ արդյոք կշարունակի՝ ոյուրացված լինել մատչելիությունը 11.3-րդ կետում նշված այն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար, ովքեր չեն ընդգրկել պարենի եւ գյուղատնտեսության համար այդ բույսերի գենետիկական ռեսուրսները, թէ կձեռնարկվեն այլ միջոցներ, որոնք նպատակահարմար կհամարվեն:

11.5. Բազմակողմ համակարգն ընդգրկում է նաեւ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները, որոնք թվարկված են 1-ին Հավելվածում եւ առկա են միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների խորհրդատու խմբի Միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների չափանիկում, ինչպես նաև 15-րդ հոդվածի 1.ա կետով, եւ այլ միջազգային հիմնարկներում՝ համաձայն 15-րդ հոդվածի 5-րդ կետի:

## ՀՈԴՎԱԾ 12

Բազմակողմ համակարգի շրջանակներում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիության ոյուրացում

12.1. Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ 11-րդ հոդվածում սահմանված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիության ոյուրացումն ապահովում է սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

12.2. Պայմանավորվող կողմերը համաձայնում են Բազմակողմ համակարգի միջոցով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ իրավական կամ այլ միջոցները այլ Պայմանավորվող կողմերին նման մատչելիություն ընձեռելու համար: Այս նպատակով նման մատչելիությունը տրամադրվում է նաեւ ցանկացած Պայմանավորվող կողմի իրավագործության ներքո գտնվող իրավաբանական եւ ֆիզիկական անձանց՝ համաձայն 11-րդ հոդվածի 4-րդ կետի:

12.3. Նման մատչելիությունն ընձեռվում է ներքոհիշյալ հետեւյալ պայմանների համաձայն.

ա) Մատչելիությունը տրամադրվում է բացառապես հետազոտությունների նպատակով օգտագործման եւ պահպանման, սելեկցիայի եւ պարենի ու գյուղատնտեսության ոլորտում կաղդերի պատրաստման համար՝ պայմանով, որ այդ նպատակները չեն ներառում

քիմիական, դեղագործական եւ/կամ այլ՝ ոչ պարենային/սննդային արդյունաբերության ապրանքներ: Բազմանպատակային մշակաբույսերի դեպքում (պարենային եւ ոչ պարենային) դրանց կարեւորությունը պարենային անվտանգության համար որոշիչ է դառնում Բազմակողմ համակարգում դրանց ընդգրկման եւ ոյուրացված մատչելիության համար:

բ) Մատչելիությունը տրամադրվում է արագ, առանց անհատական դեպքերին հետեւյու անհրաժեշտության եւ անհատույց, իսկ վճարի գանձման դեպքում այն չի գերազանցում նվազագույն գինը:

գ) Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հետ մեկտեղ տրամադրվում են նաեւ բոլոր անձնագրային տվյալները եւ, գործող օրենքի համաձայն, նաեւ ցանկացած՝ այլ առկա, ոչ գաղտնի նկարագրական բնույթի տեղեկություն:

դ) Ստացողները չեն հավակնում մտավոր որեւէ սեփականության կամ այլ

իրավունքների, որոնք սահմանափակում են Բազմակողմ համակարգից ստացված՝ պարենի

Եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների եւ դրանց գենետիկական մասերի կամ բաղադրատարրերի մատչելիությունը:

Ե) Մշակման ընթացքում գտնվող պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների, ներառյալ ագարակատերերի կողմից մշակված նյութի մատչելիությունը տրամադրվում է մշակողի հայեցողությամբ՝ դրանց մշակման ժամանակահատվածի ընթացքում:

Գ) Մտավոր եւ այլ սեփականության իրավունքներով պահպանվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիությունը տրվում է համապատասխան միջազգային համաձայնագրերի եւ ազգային օրենսդրության համաձայն:

Ե) Բազմակողմ համակարգի շրջանակներում տրված եւ պահպանված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները շարունակում են մատչելի մնալ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործողների համար՝ համաձայն տվյալ Պայմանագրի դրույթների, եւ

Ը) Չիախտելով սույն հոդվածի մյուս դրույթները՝ Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ in-situ պայմաններում գտնվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիությունը կտրամադրվի ազգային օրենսդրության դրույթների համաձայն կամ, նման օրենսդրության բացակայության դեպքում, այսպիսի չափորոշիչներին համապատասխան, որոնք կարող են սահմանված լինել Ղեկավար մարմնի կողմից:

12.4. Այդ նպատակով 12-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն դյուրացված մատչելիությունը տրամադրվում է Նյութի փոխանցման պայմանագրի համաձայն (ՆՓՊ), որն ընդունվում է Ղեկավար մարմնի կողմից եւ պարունակում է 12-րդ հոդվածի 3-րդ կետի "ա", "դ", "է" ենթակետերի դրույթները, ինչպես նաև շահույթի բաշխմամբ վերաբերող 13-րդ հոդվածի 2-րդ կետի դ.ii ենթակետի դրույթները եւ պայմանագրի համապատասխան այլ դրույթներ եւ այն դրույթը, որը պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներ ստացողը պահանջում է, որ ՆՓՊ պահանջները կիրավուն պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները այլ անձին կամ կազմակերպությանը փոխանցելու, ինչպես նաև պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների ցանկացած հետագա փոխանցումների ժամանակ:

12.5. Պայմանավորվող կողմերը, համաձայն կիրառելի իրավական պահանջների, ապահովում են ռեսուրսներ փնտրելու հսարափրությունը՝ ըստ իրենց օրենսդրական համակարգերի, ՆՓՊ շուրջ ծագող պայմանագրային վեճերի դեպքում՝ ճանաչելով, որ նման ՆՓՊ-ներով սահմանված պարտավորություններն ընկնում են բացառապես այդ ՆՓՊ-ների մասնակիցների վրա:

12.6. Վրտակարգ աղետային իրավիճակներում Պայմանավորվող կողմերը համաձայնում են տրամադրել դյուրացված մատչելիության Բազմակողմ համակարգի՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին՝ գյուղատնտեսական համակարգերի վերականգնման գործին նպաստելու համար՝ համագործակցելով աղետային իրավիճակների վերացումը համակարգողների հետ:

### ՀՐԴԱՎԱԾ 13

#### Բազմակողմ համակարգում շահույթի բաշխումը

13.1. Պայմանավորվող կողմերն ընդունում են, որ Բազմակողմ համակարգում ընդգրկված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների դյուրացված մատչելիությունն ինքնին Բազմակողմ համակարգի կողմից բերվող նշանակալից շահույթ է, եւ համաձայնում են, որ ստացված շահույթը, համաձայն սույն հոդվածի դրույթների, բաշխվում է արդար եւ հավասարաշափ:

13.2. Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ Բազմակողմ համակարգի շրջանակներում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների օգտագործումից ստացված շահույթները, այդ թվում՝ նաև կոմերցիոն

շահույթները, բաշխվում են արդար եւ հավասարաչափ՝ հետեւյալ մեխանիզմների միջոցով. տեղեկատվության փոխանակում, տեխնոլոգիաների օգտագործման հևարավորություն եւ դրա փոխանցում, պաշարի ստեղծում եւ առեւտրից ստացված շահույթի բաշխում՝ հաշվի առնելով Ղեկավար մարմնի առաջնորդության ներքո գտնվող գործողությունների գլորեալ նախագծում գործունեության առաջնայնության ոլորտները.

ա) Տեղեկատվության փոխանակում.

Պայմանավորվող կողմերը համաձայնում են տրամադրել տեղեկատվություն, որը ներառում է քարտարաններ եւ գույքացուցակներ, տեղեկատվություն տեխնոլոգիաների եւ տեխնիկական արդյունքների մասին, գիտական եւ սոցիալ-տնտեսական հետազոտությունների մասին, այդ թվում՝ պարենի եւ գյուղատնտեսության համար այս բուսական գենետիկական ռեսուլսների հատկանիշների նկարագրման, գնահատման եւ օգտագործման մասին, որոնց վրա տարածվում է Բազմակողմ համակարգը: Նման տեղեկատվությունը, եթե այս գաղտնի չէ, տրամադրվում է ըստ կիրառելի օրենքի եւ ազգային հնարավորությունների: Նման տեղեկատվությունը տրամադրվում է սույն Համաձայնագրի բոլոր Պայմանավորվող կողմերին 17-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվական համակարգի միջոցով:

բ) Տեխնոլոգիաների մատչելիությունը եւ դրանց փոխանցումը.

ի) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են տրամադրել եւ/կամ դյուրացնել Բազմակողմ համակարգի շրջանակներում գտնվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար

բույսերի գենետիկական ռեսուլսների պահպանության, բնութագրման, գնահատման եւ օգտագործման համար տեխնոլոգիաների մատչելիությունը: Գիտակցելով, որ որոշ տեխնոլոգիաներ կարող են փոխանցվել միայն գենետիկական նյութի միջոցով, Պայմանավորվող կողմերը ապահովում եւ/կամ դյուրացնում են այսպիսի տեխնոլոգիաների եւ գենետիկական նյութի մատչելիությունը, որոնց վրա տարածվում է Բազմակողմ համակարգի գործունեությունը եւ պարենի ու գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուլսների շնորհիվ մշակված կատարելագործված սորտերի եւ գենետիկական նյութի կիրառման մատչելիությունը, որոնց վրա, 12-րդ հոդվածի դրույթների համաձայն, տարածվում է Բազմակողմ համակարգը: Այդ տեխնոլոգիաների, կատարելագործված սորտերի եւ գենետիկական նյութի մատչելիությունը տրվում եւ/կամ դյուրացվում է սեփականության իրավունքներին առնչվող օրենսդրության եւ ազգային հնարավորություններին համապատասխան:

ii) Չարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների համար տեխնոլոգիաների մատչելիությունը եւ փոխանցում իրականացվում են այսպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուլսների հարցերով մշակաբույսերի օգտագործման հարցերով թեմատիկ խմբերի կազմումն ու ապահովումը եւ մասնակցությունը դրանց, գործընկերության բոլոր ձեւերը հետազոտության ու զարգացման եւ համատեղ կոմերցիոն ձեռնարկություններում՝ կապված ստացված նյութի, մարդկային ռեսուլսների զարգացման եւ հետազոտական օբյեկտների գործուն օգտագործման հետ:

iii) Վերոհիշյալ ի եւ ի կետերում նշված տեխնոլոգիաների մատչելիությունը եւ դրանց փոխանցումը, ներառյալ մտավոր սեփականության իրավունքով պաշտպանվածների փոխանցումը, Պայմանավորվող կողմեր հանդիսացնող երկրներին, մասնավորապես, առավել վատ զարգացած եւ անցումային տնտեսությամբ երկրներին, ապահովում է եւ/կամ դյուրացվում են արդար եւ առավելագույնս բարենպաստ պայմանների վրա, առավել եւս, երբ դրանք վերաբերում են պահպանման եւ ագրարակատերերի շահույթ ապահովող տեխնոլոգիաներին՝ զարգացած կամ անցումային տնտեսությամբ երկրներում, ի թիվս այլոց, զեղչային եւ արտոնյալ փոխադարձ համագործակցության պայմանով Բազմակողմ համակարգի շրջանակներում հետազոտությունների եւ մշակումների ոլորտում համագործակցության միջոցով: Նման մատչելիությունը եւ փոխանցումը ապահովվում են այս պայմաններով, որոնք ճանաչվում եւ համատեղելի են մտավոր սեփականության իրավունքների համարժեք եւ արդյունավետ պաշտպանության հետ:

գ) Պաշարի ստեղծում.

Հաշվի առնելով զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների կարիքները,

որոնք արտահայտվում են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պոտենցիալի ստեղծմանը առաջնայնություն տալու նրանց նպատակներում եւ ծրագրերում, եթե առկա են այնպիսի բուսական գենետիկական ռեսուրսներ, որոնց վրա տարածվում են Բազմակողմ համակարգի գործողությունները, Պայմանավորվող կողմերը համաձայնում են առաջնայնություն տալ՝ i) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության եւ պարբերական օգտագործման ոլորտում գիտատեխնիկական կրթության եւ մշակման ծրագրերի հիմնամանն ու ամրապնդմանը, ii) պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանությանն ու պարբերական օգտագործմանը նպաստող միջոցների ստեղծմանն ու ամրապնդմանը. հատկապես զարգացող եւ անցումային

տնտեսությամբ երկրներում, եւ iii) հնարավորության դեպքում եւ նախընտրելիորեն զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրներում՝ գիտական հետազոտությունների պաշարի զարգացում՝ այդ երկրների ինստիտուտների հետ համագործակցելով, եւ նման հետազոտությունների պաշարի զարգացում այն ոլորտներում, որտեղ դրանք անհրաժեշտ են:

η) Առեւտրայնացումից ստացված դրամական եւ այլ շահույթների բաշխում.

i) Պայմանավորվող կողմերը համաձայնում են Բազմակողմ համակարգի շրջանակներում առեւտրական շահույթի բաշխումն իրականացնել մասնավոր եւ պետական

հատվածին տվյալ հոդվածում սահմանված գործունեության մեջ ներգրավելու միջոցով, գործընկերության եւ համագործակցության միջոցով՝ ներառյալ տեխնոլոգիաների մշակման ոլորտում զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների մասնավոր հատվածը ներգրավելով:

ii) Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետում հիշատակված՝ Նյութի փոխանցման համաձայնագիրը պետք է նախատեսի այն պահանջը, որ

ստացողը, որն առեւտրայնացնում է պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներ հանդիսացող ապրանքը, եւ որը պարունակում է Բազմակողմ համակարգից ստացված նյութ, Վճարում է 19-րդ հոդվածի 3-րդ կետի "q" ենթակետով նախատեսված մեխանիզմի համաձայն ապրանքի առեւտրայնացումից ստացված շահույթի

արդար մասնաբաժին՝ բացառությամբ այն բոլոր դեպքերի, երբ այդ ապրանքն առանց սահմանափակման տրամադրվում է ուրիշներին հետագա հետազոտություններ եւ սելեկցիոն աշխատանքներ իրականացնելու համար, մինչդեռ առեւտրայնացում իրականացնող ստացողին խորհուրդ է տրվում կատարել նման վճարում:

Ղեկավար մարմինն իր առաջին հանդիպման ընթացքում որոշում է վճարման չափը, ձեւը եւ միջոց՝ համաձայն առեւտրային պրակտիկային: Ղեկավար մարմինը կարող է որոշում ընդունել վճարման տարբեր մակարդակներ կիրառելու վերաբերյալ այդ մթերքների առեւտրայնացումն իրականացնող տարբեր կատեգորիաների ստացողների համար. նա նաեւ կարող է որոշում ընդունել զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրների մասի ագրարակատերերին այդ կարգի վճարումներից ազատելու մասին:

Ղեկավար

մարմինը կարող է շահույթի արդար եւ հավասարաշափ բաշխում ապահովելու նպատակով ժամանակ առ ժամանակ վերանայել վճարման մակարդակները, եւ նա կարող է նաեւ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, գնահատել, թե արդյոք անհրաժեշտ է, որ ՆՓՊ-ում սահմանված պարտադիր վճարման պահանջը կիրառվի այն դեպքերում, երբ նման առեւտրայնացված մթերքները առանց սահմանափակման տրվում են

մյուս կողմերի տնօրինությանը հետազոտություններ եւ սելեկցիոն աշխատանքներ իրականացնելու համար:

13.3. Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներից ստացված շահույթները, որոնք բաշխված են Բազմակողմ համակարգի շրջանակներում, լինի ուղղակի, թե անուղղակի, պետք է հասնեն բոլոր երկրների, մասնավորապես զարգացող

Եւ անցումային տևականությամբ երկրների ազարակատերերին, ովքեր պահպանում եւ պարբերաբար օգտագործում են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները:

13.4. Ղեկավար մարմինն իր առաջին հանդիպման ընթացքում քննարկում է 18-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ համաձայնեցված ֆինանսավորման ռազմավարության շրջանակներում հատուկ օգնության համապատասխան քաղաքականությունը եւ չափանիշները, որը տրամադրվում է զարգացող եւ անցումային տևականությամբ երկրներին, որոնք ունեն նշանակալից ներդրում Բազմակողմ համակարգում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների բազմազանության ապահովման գործում եւ/կամ ունեն հատուկ պահանջմունքներ:

13.5. Պայմանավորվող կողմերն ընդունում են, որ զարգացող եւ անցումային տևականությամբ երկրներում Գործողությունների գլոբալ նախագծի ամբողջական իրականացման հնարավորությունը եապես կախված է սույն հոդվածի արդյունավետ իրականացումից եւ 18-րդ հոդվածում նախատեսված ֆինանսավորման ռազմավարությունից:

13.6. Պայմանավորվող կողմերը դիտարկում են ներդրումների կամավոր բաշխման ռազմավարության իրականացման ձեւերը, որի համաձայն պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներից շահույթ ստացող սննդի արդյունաբերության ձեռնարկությունները կատարում են վճարումներ Բազմակողմ համակարգին:

## ՄԱՍ Վ ՕԺԱՆԱԿ ԲԱՐԱԿՐԻՉՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 14 Գործողությունների գլոբալ նախագիծ

Ընդունելով, որ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման ու կայուն օգտագործման ուղղված Գործողությունների գլոբալ ծրագիրը կարեւոր է սույն Պայմանագրի համար, Պայմանավորվող կողմերը նպաստում են դրա արդյունավետ իրականացմանը, ներառյալ ազգային գործողությունների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միջազգային համագործակցության միջոցով, ի թիվս այլոց՝ կարողությունների զարգացման, տեխնոլոգիաների փոխանցման եւ տեղեկատվության փոխանակման համար՝ հաշվի առնելով:

13-րդ հոդվածի դրույթները:

### ՀՈԴՎԱԾ 15

Գյուղատնտեսական միջազգային հետազոտությունների խորհրդատվական խմբի միջազգային կենտրոնների եւ այլ կառույցների տրամադրության ներքը գտնվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների ex situ բուսական հավաքածուներ:

15.1. Պայմանավորվող կողմերը ճանաչում են սույն Պայմանագրի համար միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների խորհրդատվական խմբի (ՄԳՀԽԵ)

միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների կենտրոնների (ԿՀՀԿ) վստահելի տրամադրության տակ գտնվող բույսերի գենետիկական ռեսուրսների ex situ հավաքածուների կարեւորությունը պարենի եւ գյուղատնտեսության համար:

Պայմանավորվող կողմերը կոչ են անում ՄԳՀԿ-ին նման ex situ հավաքածուների վերաբերյալ համաձայնագիր ստորագրել Ղեկավար մարմնի հետ՝ համաձայն հետեւյալ ժամկետների եւ պայմանների.

ա) սույն Պայմանագրին կից 1-ին Հավելվածում թվարկված եւ ՄԳՀԿ տրամադրության տակ գտնվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի

գենետիկական ռեսուրսները պետք է մատչելի լինեն՝ սույն Պայմանագրի IV մասում ամրագրված դրույթների համաձայն,

բ) ՄԳՀԿ տրամադրության տակ գտնվող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները, որոնք թվարկված չեն սույն Պայմանագրին կից 1-ին Հավելվածում եւ հավաքված են նախքան դրա ուժի մեջ մտնելը, տրամադրվում են ըստ ՆՓՊ դրույթների, որոնք ներկայումս օգտագործվում են ՄԳՀԿ-ի եւ ՊԳԿ-ի միջեւ առկա համաձայնագրերին համապատասխան։ Այս ՆՓՊ-ն փոփոխության եւ ենթարկվում Ղեկավար մարմնի կողմից ոչ ուշ, քան մինչեւ իր երկրորդ նստաշրջանը՝ խորհրդակցելով ՄԳՀԿ-ի հետ՝ համաձայն սույն Պայմանագրի համապատասխան դրույթների, մասնավորապես, 12 եւ 13-րդ հոդվածների, հետեւյալ պայմաններով՝

ի) ՄԳՀԿ-ն պարբերաբար, համաձայն Ղեկավար մարմնի կողմից ընդունված ժամանակացույցի, տեղեկացնում է նրան ուժի մեջ մտած ՆՓՊ-ի մասին,

ii) որեւէ ՆՓՊ-ի բացակայության դեպքում Պայմանավորվող կողմերին, որոնց տարածքում in situ պայմաններում պահածոյացվել են բույսերի գենետիկական ռեսուրսներ, ըստ պահանջի, ներկայացվում են նման ռեսուրսների նմուշներ պարենի եւ գյուղատնտեսության վարման համար՝ առանց որեւէ ՆՓՊ-ի,

iii) Վերոհիշյալ ՆՓՊ-ի շրջանակներում առաջացած շահույթները, որոնք կուտակվում են 19-րդ հոդվածի 3-րդ կետի "զ" ենթակետում նշված մեխանիզմի միջոցով, կիրառվում են, մասնավորապես, խնդրո առարկա պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման համար, մասնավորապես, զարգացող ու անցումային տնտեսությամբ

երկրների ազգային եւ տարածաշրջանային ծրագրերում, հատկապես բազմատեսակության

կենտրոններում եւ առավել թույլ զարգացած երկրներում, եւ

iv) ՄԳՀԿ-ն համապատասխան միջոցներ է ձեռնարկում, համաձայն իր իրավասության, ՆՓՊ պայմանների հետ արդյունավետ համապատասխանություն ապահովելու համար եւ անհամապատասխանության դեպքերում այդ մասին անհապաղ տեղեկացնում է Ղեկավար մարմնին,

գ) ՄԳՀԿ-ները ճանաչում են Ղեկավար մարմնի իրավասությունը՝ սույն Պայմանագրի դրույթներին ենթակա եւ վերջինիս տրամադրության ներքո գտնվող չափանիկում չափանիկում և սինուսային պահումուն պահանջման մեջում պահպանային համապատասխանություն ապահովելու համար, մասնավորապես, պարենի եւ գյուղատնտեսության համար գենետիկ ռեսուրսների վարման համար ֆԱՕ-ի հանձնախմբի կողմից հաստատված գենային բանկերի չափորոշիչների,

Ե) ՄԳՀԿ հայցի դեպքում քարտուղարը ձգտում է ապահովել համապատասխան տեխնիկական աջակցություն,

զ) Քարտուղարը իրավասու է ցանկացած պահի մուտք գործել օբյեկտներ, ինչպես նաև տեսչական ստուգման ենթարկել դրանցում իրականացվող գործողությունները, որոնք անմիջականորեն կապված են սույն հոդվածով կարգավորվող նյութի պահպանության եւ փոխանակման հետ,

Է) Եթե ՄԳՀԿ տնօրինության տակ գտնվող չափանիկում համապատասխան կամ սպասնում է որեւէ իրադարձություն, ներառյալ ֆորսմաժորային իրավիճակները, քարտուղարը, ընդունող երկրի համաձայնությամբ եւ ըստ հնարավորության, նպաստում է դրանց լիկվիդացմանը կամ փոխանցմանը:

15.2. Պայմանավորվող կողմերը համաձայնում են ապահովել 1-ին Հավելվածում նշված՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիություն բազմակողմ համակարգի շրջանակներում ՄԳՀԿ-ի այս ՄԳՀԿ-ներին, որոնք, սույն Պայմանագրին համապատասխան համաձայնագիր են ստորագրել Ղեկավար մարմնի հետ։ Նման կենտրոնները ընդգրկվում են քարտուղարի կողմից կազմվող ցուցակում՝ Պայմանավորվող կողմերին, ըստ նրանց հայտի, տրամադրելու համար։

15.3. Նյութը, որը այլ է, քան 1-ին Հավելվածում ներառվածներն են, որոնք

սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո կստանան եւ կպահպանեն ՄԳՀԿ-ները, հատկացվում է ըստ այն պայմանների, որոնք համապատասխանում են տվյալ նյութը ստացող եւ նման ռեսուրսների ծագման երկրի, ինչպես նաև դրանք՝ Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի կամ կիրառվելիք իրավունքի այլ նորմերի համաձայն այդ ռեսուրսները ձեռք բերած երկրի ու ՄԳՀԿ-ների միջեւ փոխադարձաբար համաձայնեցված պայմաններին:

15.4. Պայմանագրով կողմերին կոչ է արվում Ղեկավար մարմնի հետ համաձայնագրի ստորագրած ՄԳՀԿ-ներին մուտք հատկացնել դեպի պարենի արտադրության

եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները՝ ըստ այն պայմանների, որոնք թվարկված չեն 1-ին Յավելվածում եւ ունեն կարենոր նշանակություն ՄԳՀԿ-ների ծրագրերի եւ գործունեության համար:

15.5. Ղեկավար մարմնը ճգնաժամ է նաև սույն հոդվածում նշված նպատակների համար կնքել համաձայնագրեր այլ համապատասխան միջազգային կառույցների հետ:

### ՀՐԴՎԱԾ 16

Բույսերի գենետիկական ռեսուրսների միջազգային ցանցեր

16.1. Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների առավելագույն տարածման նպատակով՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների առնչվող միջազգային ցանցերի շրջանակներում գոյություն ունեցող համագործակցությունը խթանվում կամ զարգանում է առկա պայմանագրերի հիման վրա եւ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

16.2. Պայմանագրով կողմերը հարկ եղած դեպքերում խրախուսում են բոլոր համապատասխան կառույցներին, ներառյալ պետական, մասնավոր, ոչ կառավարական, հետազոտական, սելեկցիոն եւ այլ հիմնարկները, մասնակցություն ունենալ միջազգային ցանցերում:

### ՀՐԴՎԱԾ 17

Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների տեղեկատվական գլոբալ համակարգ

17.1. Պայմանագրով կողմերը համագործակցում են գլոբալ տեղեկատվական համակարգ մշակելու եւ ուժեղացնելու համար՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին վերաբերող՝ գիտական, տեխնիկական եւ միջավայրային տեղեկատվության փոխանակումը ոյուրացնելու համար՝ հիմնված գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի վրա, ակնկալելով, որ տեղեկատվության նման փոխանակումը կնպաստի օգուտների բաշխմանը՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսներին վերաբերող տեղեկատվությունը մատչելի դարձնելով բոլոր երկրներին: Տեղեկատվական գլոբալ համակարգը ստեղծելիս հայցվում է Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի միջնորդության մեխանիզմը:

17.2. Նյութի պահպանվածությունն ապահովելու նպատակով Պայմանագրով կողմերից տեղեկություն ստանալու հիման վրա հարկ է նախատեսել պարենի արտադրության եւ գյուղատնտեսության վարման համար բույսերի գենետիկական ռեսուրսների արդյունավետ աջակցություն՝ վտանգ սպառնալու մասին վաղ նախազգուշացման միջոցներ:

17.3. Պայմանագրով կողմերը համագործակցում են ՖԱՕ-ի՝ Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների հանձնաժողովի հետ՝ աշխարհում գոյություն ունեցող՝ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների վիճակի պարբերական վերագնահատման ժամանակ՝ 14-րդ հոդվածում նշված Գործողությունների փոխանցիկ գլոբալ նախագծի նորացումը դյուրացնելու համար:

ՄԱՍ VI  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՐԴՎԱԾ 18  
Ֆինանսական ռեսուրսներ

18.1. Սույն Պայմանագրի կիրառման նպատակով Պայմանավորվող կողմերը նախաձեռնում են իրականացնել ֆինանսավորման ռազմավարություն՝ սույն հոդվածի դրույթների համաձայն:

18.2. Ֆինանսավորման ռազմավարության նպատակն է սույն Պայմանագրով նախատեսված գործողությունների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների մատչելիության, թափանցիկության եւ արդյունավետության բարձրացումը:

18.3. Առաջնային գործողությունների, նախագծերի ու ծրագրերի համար ֆինանսավորման կենտրոնացման նպատակով, մասնավորապես գարգացող եւ անցումային

տնտեսությամբ երկրներում, ինչպես նաև հաշվի առնելով Գործողությունների գլոբալ նախագիծը, Ղեկավար մարմինը նման ֆինանսավորման համար պարբերաբար սահմանում է

նպատակային ցուցանիշ:

18.4. Ֆինանսավորման այդպիսի ռազմավարության համաձայն՝

ա) Պայմանավորվող կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ ու համապատասխան միջոցներ միջազգային մեխանիզմների, հիմնադրամների եւ այլ կառույցների Ղեկավար մարմիններում, որպեսզի ապահովի սույն Պայմանագրով նախատեսված նախագծերի ու ծրագրերի իրականացման նպատակով նախատեսելի եւ համաձայնեցված ռեսուրսների տրամադրման առաջնայնությունն ու արդյունավետությունը:

բ) Չարգացող երկրներ հանդիսացող Պայմանավորվող կողմերի եւ անցումային տնտեսությամբ Պայմանավորվող կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններն արդյունավետ կատարելու ունակությունը կախված կլինի սույն հոդվածում հիշատակված միջոցների բաշխման արդյունավետությունից, հատկապես գարգացած երկրներ հանդիսացող կողմերի ռեսուրսներից: Չարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Պայմանավորվող կողմերը իրենց նախագծերում եւ ծրագրերում առաջնայնություն են տալիս պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների ասպարեզում հնարավորություններ ստեղծելուն:

գ) Չարգացած երկրներ հանդիսացող Պայմանավորվող կողմերը նույնագեն տրամադրում են, իսկ զարգացող երկրները եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրի իրականացման համար օգտվում

են ֆինանսական ռեսուրսներից տարածաշրջանային երկկողմ եւ բազմակողմ խողովակներով: Նման խողովակները ներառում են 19-րդ հոդվածի 3-րդ կետի "զ" ենթակետում նշված մեխանիզմը:

դ) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, իր ազգային հնարավորություններին ու ֆինանսական ռեսուրսներին համապատասխան, ընդունել պարտավորություններ եւ հատկացնում է ֆինանսական ռեսուրսներ պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման ու կայուն օգտագործման ուղղությամբ՝ ազգային գործունեություն ծավալելու նպատակով: Յատկացվող ֆինանսական ռեսուրսները չեն օգտագործվում սույն Պայմանագրին չիամապատասխանող նպատակներով, մասնավորապես այն ոլորտում, որը կապված է հումքային ապրանքների միջազգային առեւտրի հետ:

ե) Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ 13-րդ հոդվածի 2-րդ կետի "դ" ենթակետի իրականացման արդյունքում ստացված շահույթները հանդիսանում են ֆինանսավորման ռազմավարության մի մասը:

գ) Կամավոր մուծումներ կարող են ստացվել նաև Պայմանավորվող կողմերից, մասնավոր հատվածից, 13-րդ հոդվածի դրույթները հաշվի առնելով, ոչ կառավարական կազմակերպություններից եւ այլ աղբյուրներից: Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ Ղեկավար մարմինը սահմանում է նման մուծումներին աշակելու

Նպատակով ռազմավարության իրականացման ձեւերը:

18.5. Պայմանագրով կողմերը համաձայնում են, որ առաջնայնությունը տրվում է ազարակատերերի համար համաձայնեցված նախագծերի ու ծրագրերի իրականացմանը զարգացող, հատկապես առավել թույլ զարգացած, ինչպես նաև անցումային տևականությամբ երկրներում, որոնք պահպանում ու կայուն օգտագործում են պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսները:

## ՄԱՍ 7 ԿԱՇՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈՂՎԱԾ 19 ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆ

19.1. Սույնով հաստատվում է սույն Պայմանագրի Ղեկավար մարմին, որի կազմի մեջ մտնում են բոլոր Պայմանագրով կողմերը:

19.2. Ղեկավար մարմին բոլոր որոշումներն ընդունվում են կոնսենսուսով, եթե միայն կոնսենսուսով նախատեսված չէ որոշումների ընդունման համար այլ մեթոդ, բացառությամբ 23-րդ եւ 24-րդ հոդվածների, որոնք միշտ պահանջում են կոնսենսուս:

19.3. Ղեկավար մարմին գործառություն սույն Պայմանագրի լրիվ իրականացմանն աջակցելու Ե՝ պահպանելով նրա նպատակները, մասնավորապես՝

ա/ ապահովել ռազմավարական ուղղություն եւ կողմնորոշող ցուցումներ՝ սույն Պայմանագրի իրականացումը դիտարկելու համար, եւ ընդունել այնպիսի հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրի եւ, մասնավորապես, Բազմակողմ համակարգի գործառության համար,  
բ/ ընդունել նախագծեր եւ ծրագրեր սույն Պայմանագրի իրականացման համար,  
գ/ 18-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ իր առաջին նստաշրջանում ընդունել եւ պարերաբար վերանայել սույն Պայմանագրի իրականացման համար ֆինանսավորման ռազմավարությունը,

դ/ ընդունել սույն Պայմանագրի բյուջեն,  
ե/ անհրաժեշտ միջոցների առկայությունից կախված՝ քննարկել եւ հաստատել պահանջող օժանդակող մարմինները, ինչպես նաև՝ նրանց համապատասխան մանդատներն ու կազմը,

զ/ անհրաժեշտության դեպքում ստեղծել համապատասխան մեխանիզմ, ինչպիսին է Նպատակային հաշիվը, որի միջոցով ստացվում եւ օգտագործվում են ֆինանսական ռեսուրսները, որոնք կուտակվում են այդ հաշվի վրա՝ սույն Պայմանագրի նպատակներն իրականացնելու համար,

թ/ միջազգային այլ համապատասխան կազմակերպությունների եւ պայմանագրային մարմինների, ներառյալ, մասնավորապես, Կենսաբանական բազմազանության Կոնվենցիայի

Կողմերի խորհրդաժողովի հետ հաստատել եւ զարգացնել համագործակցություն այն հարցերի շուրջ, որոնց վրա տարածվում է սույն Պայմանագրի, ներառյալ նրանց մասնակցությունը ֆինանսավորման ռազմավարությանը,

ը/ քննարկել եւ ընդունել, եթե անհրաժեշտ է, փոփոխություններ սույն Պայմանագրում՝ 23-րդ հոդվածի դրույթների համաձայն,

թ/ քննարկել եւ ընդունել, եթե անհրաժեշտ է, փոփոխություններ սույն Պայմանագրի 3-րդ հոդվածում՝ համաձայն 24-րդ հոդվածի դրույթների,

ժ/ քննարկել ռազմավարության իրականացման ձեւերը կամավոր անդամավճարները խթանելու համար, մասնավորապես այն, ինչ վերաբերում է 13-րդ եւ 18-րդ հոդվածներին,

ժա/ տրամադրել այսպիսի այլ գործառույթներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Պայմանագրի նպատակներին հասնելու համար,

ժթ/ ի գիտություն ընդունել Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի Կողմերի խորհրդաժողովի եւ համապատասխան այլ միջազգային կազմակերպությունների եւ պայմանագրային մարմինների համապատասխան որոշումները,

ԺԳ/ ըստ անհրաժեշտության՝ տեղեկացնել Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի Կողմերի խորհրդաժողովին եւ այլ միջազգային կազմակերպություններին ու պայմանագրային մարմիններին սույն Պայմանագրի իրականացման հետ կապված հարցերի մասին, եւ

Ժդի հաստատել ՄԳՀԿ-ի Եւ 15-րդ հոդվածում նշված այլ միջազգային հաստատությունների համաձայնագրերի պայմանները, ինչպես նաև Վերանայել Եւ փոփոխություններ կատարել 15-րդ հոդվածում նշված ՆՓԴ-ում:

19.4. Παραπάνωτελη 19-ρη ήτη η πρώτη διάσημη στοιχεία της αρχαίας ελληνικής λογοτεχνίας, η οποία αποτελεί μια από τις πιο γνωστές και ιστορικές ποιητικές έργα της αρχαιότητας. Η ποίηση αυτή, γνωστή ως Τραγούδι της Αθηναϊκής Εποχής, παρουσιάζει μια συνδυασμό αρχαίων μουσικών στοιχείων με ποίηση που αποτελείται από μετρικά τετράλογα, που συνδέονται μεταξύ τους μέσω μιας ειδικής μουσικής συντονίσεως.

բացառությամբ այն դեպքերի, երբ Նրանք պատշաճորեն լիազորված են փոխարինելու պատվիրակներին:

19.5. Միավորված ազգերի կազմակերպությունը, Նրա մասնագիտացված գործակալությունները եւ Ասումային Եներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող ցանկացած պետություն Ղեկավար մարմնի նիստերին կարող է ներկայացված լինել դիտորդի կարգավիճակով։ Ցանկացած այլ մարմին կամ գործակալություն, լինի այն կառավարական, թե ոչ կառավարական, որը մասնագիտացած է պարենի եւ գյուղատնտեսության համար բոլորի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման բևագավառում, եւ որը տեղեկացրել են Քարտուղարին Ղեկավար մարմնի նիստերին դիտորդի կարգավիճակով ներկա գտնվելու ցանկության մասին, կարող են նույնպես մասնակցել դրանց, եթե դրան չի առարկում ներկա Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ երրորդը։ Դիտորդի թույլտվությունը եւ մասնակցությունը ենթակա են Ղեկավար մարմնի կողմից ընդունված կանոնակարգին։

19.6. Պայմանավորվող կողմ հանդիսացող՝ ՊԳԿ-ի անդամ կազմակերպությունը եւ այդ անդամ կազմակերպության մասնակից պետությունները, որոնք հանդիսանում են Պայմանավորվող կողմեր, որը համարվում է եւ այդ անդամ կազմակերպության անդամ պետությունները, իրականացնում են իրենց անդամության իրավունքները եւ կատարում են իրենց անդամության պարտականությունները՝ համաձայն mutatis mutandis, ՊԳԿ-ի սանունառողության եւ Ընդհանուր սանունների:

19.7. Նեկավար մարմինն ընդունում եւ, եթե անհրաժեշտ է, փոփոխում է իր իսկ կողմից ընդունված կանոնակարգի կանոնները, ինչպես նաև՝ ֆինանսավորման սանոներո, որոնք չենթու է հակասեն սույն Պայմանագիր:

19.9. Ղեկավար մարմինը առնվազն երկու տարին մեկ անգամ գումարում է կանոնավոր նստաշրջաններ: Այդ նստաշրջանները, որքանով հնարավոր է, անցկացվում են Պարենի եւ գյուղատնտեսության համար բոլյսերի գենետիկական ռեսուրսների հանձնաժողովի կանոնավոր նստաշրջաններից առաջ կամ հետո:

19.10. Ղեկավար մարմին հատուկ նստաշրջանները գումարվում են այն դեպքում, եթե դա նպատակահարմար է զունում Ղեկավար մարմինը, կամ՝ Պայմանագործող կողմից գրավոր խնդրանքով՝ պայմանով, որ այդ խնդրանքին կստարեն Պայմանագործող կողմերի

առևտություն մեկ երրորդը:

20.1. Ղեկավար մարմնի քարտուղարը նշանակվում է ՊԳԿ-ի գլխավոր տնօրենի կողմից՝ Ղեկավար մարմնի հավանությամբ: Քարտուղարին օգնում է այնպիսի աշխատակազմ, որն անհրաժեշտ է:

20.2. Քարտուղարը կատարում է հետեւյալ գործառույթները՝

ա/ կազմակերպում եւ վարչական օժանդակություն է ցուցաբերում Ղեկավար մարմնի եւ ցանկացած օժանդակող մարմինների նստաշրջաններին, որոնք կարող են ստեղծվել,

բ/ օգնություն է ցուցաբերում Ղեկավար մարմնին նրա գործառույթների կատարման գործում, ներառյալ կոնկրետ խնդիրների կատարումը, որոնք կարող են նրա վրա դրված լինել Ղեկավար մարմնի որոշմամբ,

գ/ Ղեկավար մարմնին գեկուցում է իր գործունեության մասին:

20.3. Քարտուղարը տեղյակ է պահում բոլոր Պայմանավորվող կողմերին եւ Գլխավոր տնօրենին՝

ա/ Ղեկավար մարմնի ընդունած որոշումների մասին՝ ընդունման պահից սկսած՝ վաթսուն օրվա ընթացքում,

բ/ սույն Պայմանագրի դրույթների համաձայն Պայմանավորվող կողմերից ստացված տեղեկատվության մասին:

20.4. Քարտուղարը պահովում է Ղեկավար մարմնի նստաշրջանների փաստաթղթաբանությունը Միավորված ազգերի կազմակերպության վեց լեզուներով:

20.5. Քարտուղարը համագործակցում է այլ կազմակերպությունների եւ պայմանագրային մարմինների հետ, ներառյալ, մասնավորապես, Կենսաբանական բազմազանության մասին Կոնվենցիայի քարտուղարությունը, սույն Պայմանագրի նպատակներին հասնելու համար:

---

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

### ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՊԱՐԵՆԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ  
(2-րդ մաս)

### ՀՈԴՎԱԾ 21 Համապատասխանություն

Ղեկավար մարմինն իր առաջին նխտին ընսարկում եւ հաստատում է համագործակցության վրա հիմնված արդյունավետ ընթացակարգը եւ գործնական մեխանիզմները, որոնք պետք է նպաստեն սույն Պայմանագրի դրույթների համապատասխանեցմանը, իսկ անհամապատասխանության դեպքում՝ հարցերի ընսարկմանը:

Այդ ընթացակարգերը եւ մեխանիզմները ներառում են դիտարկում եւ առաջարկում են խորհրդատվություններ կամ աջակցություն, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվությունները կամ իրավական աջակցությունը, մասնավորապես

զարգացող երկրներին եւ անցումային տնտեսությամբ երկրներին:

### ՀՈԴՎԱԾ 22 ՎԵճերի կարգավորումը

22.1. Սույն Պայմանագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված՝ Պայմանավորվող կողմերի միջեւ վեճեր առաջանալու դեպքում շահագրգիռ կողմերը ձգտում են վեճերը կարգավորել բանակցությունների միջոցով:

22.2. Եթե շահագրգիռ Կողմերը չեն կարող համաձայնության հասնել բանակցությունների միջոցով, նրանք կարող են համատեղ ապավիճել երրորդ Կողմի բարի ծառայություններին կամ դիմել նրան՝ որպես միջնորդ հանդես գալու խնդրանքով:

22.3. Սույն Պայմանագրի վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու պահին կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, Պայմանավորվող Կողմը կարող է ավանդապահին ուղղել գրավոր դիմում այն մասին, որ 22-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն չլուծված վեճերի դեպքում, ինքը որպես վեճերի լուծման պարտադիր միջոց է համարում Ներքոհիշյալ ձեւերից մեկը կամ երկուսը՝

ա/ արբիտրաժային քննություն՝ համաձայն սույն Պայմանագրի 2-րդ Հավելվածի 1-ին մասում ամրագրված ընթացակարգի,  
բ/ վեճի հանձնում Միջազգային դատարանին:

22.4. Եթե վեճի մասնակից Կողմերը, 22-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չեն ընդունել այս կամ այն ընթացակարգերից որեւէ մեկը, ապա վեճը քննարկվում է համաձայնեցված ընթացակարգի հիման վրա, համաձայն սույն Պայմանագրի 2-րդ Հավելվածի 2-րդ մասի, եթե Կողմերը այլ համաձայնության չեն եկել:

### ՀՈԴՎԱԾ 23 Պայմանագրի փոփոխությունները

23.1. Ցանկացած Պայմանավորվող Կողմ կարող է սույն Պայմանագրում առաջարկել փոփոխություններ:

23.2. Սույն Պայմանագրին առևցվող փոփոխություններն ընդունվում են Ղեկավար մարմնի նստաշրջանի ժամանակ: Զարտուղարն առաջարկված փոփոխությունների տեքստում

ուղարկում է Պայմանավորվող Կողմերին դրա հնարավոր ընդունման նստաշրջանի սկզբից ոչ ուշ, քան վեց ամիս ժամանակահատվածում:

23.3. Սույն Պայմանագրի բոլոր փոփոխություններն ընդունվում են Ղեկավար մարմնի նստաշրջանին մասնակցող Պայմանավորվող Կողմերի կոնսենսուսի հիման վրա:

23.4. Ղեկավար մարմնի կողմից ընդունված ցանկացած փոփոխությունը Պայմանավորվող Կողմերի համար ուժի մեջ է մտնում վավերագրերը կամ Պայմանավորվող Կողմերի երկու երրորդով վավերացված, ընդունված կամ հավանություն ստացած փաստաթղթերը ի պահ հանձնելուց իննուն օր հետո: Այնուհետև փոփոխություններն ուժի մեջ են մտնում ցանկացած այլ Պայմանավորվող Կողմի համար՝ վավերագրերն ու հավաստագրերը ի պահ հանձնելուց հետո՝ իննուն երրորդ օրը:

23.5. Սույն հոդվածի նպատակների համար ՊԳԿ-ի անդամ կազմակերպության կողմից ի պահ հանձնված փաստաթուղթը լրացուցիչ չի համարվում այն փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնվում այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից:

### ՀՈԴՎԱԾ 24 Հավելվածներ

24.1. Սույն Պայմանագրի Հավելվածները համարվում են նրա անբաժանելի մասը, եւ սույն Պայմանագրի վրա կատարված հղումները իրենցից միաժամանակ ներկայացնում են հղում նրա ցանկացած Հավելվածին:

24.2. Սույն Պայմանագրի փոփոխություններին վերաբերող 23-րդ հոդվածի դրույթները տարածվում են նաև Հավելվածների վրա կատարված փոփոխությունների վրա:

### ՀՈԴՎԱԾ 25 Ստորագրում

Սույն Պայմանագիրը ստորագրման համար բաց է ՊԳԿ-ի բոլոր անդամների եւ ցանկացած պետության համար, որը չի համարվում ՊԳԿ-ի անդամ, սակայն համարվում է

Միավորված ազգերի կազմակերպության անդամ կամ ցանկացած մասնագիտացված հիմնարկի  
կամ Ազոմային Եներգիայի միջազգային գործակալության անդամ՝ 2001թ. նոյեմբերի 3-ից մինչեւ 2002թ. նոյեմբերի 4-ը՝ ՊԳԿ-ի գրասենյակում:

**ՀՐԴՎԱԾ 26**  
Վավերացում, ընդունում կամ հավանություն

Սույն Պայմանագիրը Ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման ՊԳԿ-ի անդամների եւ ՊԳԿ-ի անդամներ չհանդիսացող կողմերի կողմից, որոնք նշված են 25-րդ հոդվածում: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ են հանձնվում ավանդապահին:

**ՀՐԴՎԱԾ 27**  
Միացում

Սույն Պայմանագիրը միանալու համար բաց է ՊԳԿ-ի բոլոր անդամների եւ ցանկացած պետության համար, որը չի համարվում ՊԳԿ-ի անդամ, սակայն համարվում է Միավորված ազգերի կազմակերպության կամ Նրա ցանկացած մասնագիտացված հիմնարկի  
կամ Ազոմային Եներգիայի միջազգային գործակալության անդամ՝ այն օրվանից, երբ Պայմանագիրը փակված է ստորագրելու համար: Միանալու մասին փաստաթղթերը ի պահ են հանձնվում ավանդապահին:

**ՀՐԴՎԱԾ 28**  
Ուժի մեջ մտնելը

28.1. 29-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում քառասուներորդ վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերի ի պահ հանձնելուց հետո՝ ինսուներորդ օրը, պայմանով, որ առնվազն քսան վավերագրեր, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթեր ի պահ  
են հանձնվել ՊԳԿ-ի անդամների կողմից:

28.2. ՊԳԿ-ի յուրաքանչյուր անդամի եւ ցանկացած պետության համար, որը չի համարվում ՊԳԿ-ի անդամ, սակայն համարվում է Միավորված ազգերի կազմակերպության

կամ Նրա ցանկացած մասնագիտացված հիմնարկի կամ Ազոմային Եներգիայի միջազգային գործակալության անդամ, եւ որը վավերացնում, ընդունում, հաստատում կամ միանում են դրան, 28-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, քառասուներորդ վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին քառասուներորդ փաստաթղթի ի պահ հանձնումից հետո, Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վավերագրեր, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո՝ ինսուներորդ օրը:

**ՀՐԴՎԱԾ 29**  
ՊԳԿ-ի անդամ կազմակերպությունները

29.1. Երբ ՊԳԿ-ի անդամ կազմակերպությունն ի պահ է հանձնում վավերագրեր, ընդունման, հաստատման կամ սույն Պայմանագրին միանալու մասին փաստաթուղթը, անդամ կազմակերպությունը պետք է, ՊԳԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, ծանուցի ՊԳԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ներկայացված իր իրավասության վերաբերյալ հայտարարությունում տեղի ունեցած

ցանկացած փոփոխության մասին, որը կարող է պահանջվել սույն Պայմանագրին նրա միանալու լույսի ներքո: Սույն Պայմանագրի ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ ՊԳԿ-ի անդամ կազմակերպությանը, որը համարվում է սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմերից մեկը, դիմել խնդրանքով՝ տեղեկատվություն ներկայացնել այն մասին, թե անդամ կազմակերպություններից եւ նրանց անդամ պետություններից որն է պատասխանատվություն կրում ցանկացած կոնկրետ գործառույթի:

Կատարման համար, որի վրա տարածվում է Պայմանագիրը: Անդամ կազմակերպությունը այդ տեղեկատվությունը ներկայացնում է խելամիտ ժամկետում:

29.2. ՊԳԿ-ի Անդամ կազմակերպության կողմից ի պահ հանձնվող վավերագրերը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերը չեն համարում որպես լրացուցիչ փաստաթղթեր այն փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնվել նրա անդամ պետությունների կողմից:

### ՀՈԴՎԱԾ 30 Վերապահումներ

Սույն Պայմանագրին որեւէ վերապահում չի թույլատրվում:

### ՀՈԴՎԱԾ 31 Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետություններ

Պայմանավորվող կողմերը խրախուսում են ՊԳԿ-ի ցանկացած անդամին կամ այլ պետություններին, որոնք չեն համարվում սույն Պայմանագրի կողմ, ընդունել սույն Պայմանագիրը:

### ՀՈԴՎԱԾ 32 Դուրս գալը

32.1. Ցանկացած Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ սույն Պայմանագրի՝ իր համար ուժի մեջ մտնելուց հետո երկու տարի անց գրավոր կարող է ծանուցել ավանդապահին Պայմանագրից իր դուրս գալու մասին: Ավանդապահին իր հերթին անմիջապես տեղեկացնում է բոլոր Պայմանավորվող կողմերին:

32.2. Դուրս գալս ուժի մեջ է մտնում ծանուցագիրը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

### ՀՈԴՎԱԾ 33 Դադարեցումը

33.1. Սույն Պայմանագրին ինքնին դադարեցնում է իր գործողությունը, եթե՝ երբ Պայմանավորվող կողմերի թիվը դուրս գալու արդյունքում նվազում է քառասունից, եթե Պայմանագրի մնացած կողմերը միաձայն այլ որոշում չեն ընդունում:

33.2. Ավանդապահը տեղեկացնում է բոլոր Պայմանավորվող կողմերին, երբ Պայմանավորվող կողմերի քանակը նվազում է քառասունից:

33.3. Գործունեությունը դադարեցնելու դեպքում ակտիվների տիրապետումը կանոնակարգվում է ֆինանսական կանոններով, որոնք ընդունվում են Ղեկավար մարմնի կողմից:

### ՀՈԴՎԱԾ 34 Ավանդապահը

Սույն Պայմանագրի ավանդապահ է համարվում ՊԳԿ-ի Գլխավոր տևորենը:

### ՀՈԴՎԱԾ 35

## Հավասարագոր տեքստեր

Սույն Պայմանագրի արարերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարագոր են:

### ՀԱՎԵԼՎԱԾ

Մշակաբույսերի ցանկ, որոնց վրա տարածվում է բազմակողմ համակարգի ազդեցությունը

Պարենային մշակաբույսեր

Մշակաբույսը	Ցեղը	Ծանոթագրություն	
Բացապտուղ	Artocarpus	Միայն հացապտողի	
Ծնեբեկ	Asparagus		
Վարսակ	Avena		
Ճակնդեղ	Beta		
Կաղամբ	Brassica եւ այլն Brassica, Armoracia, Barbarea, Camelina, Crambe, Diplotaxis, Eruca, Isatis, Lepidium, Raphanobrassica, Raphanus, Rorippa and Sinapis: Դրանց Են պատկանում նաեւ այնպիսի յուղատու եւ բանջարեղենային բույսերը, ինչպիսիք են   Կաղամբը, կաղամբ յուղաբերը, մաևանեխը,   Կոտեմը, ճարճրուկ ցանովի, ամսական   Բողկը եւ շաղգամը: Lepidium meyenii   (maca) տեսակը չի ներառվել:	Տարածվում է հետեւյալ ցեղերի վրա՝	
Կաժան	Cajanus		
Սիսեր	Cicer		
Ցիտրուսայիններ	Citrus	Poncirus եւ Fortunella ցեղերը՝ որպես   պատվաստակալ	
Արմավենի՝	Cocos		
Կոկոսյան			
Կարեւորագույն	Colocasia Xanthosoma	Կարեւորագույն նվիկազգիներին պատկանում են փղականջը, ինչպես նաեւ   տարո, դաշին եւ տաննինս	
Գազար	Daucus		
Դիոսկոր	Dioscorea		
Բաղրուկ	Eleusine		
Ելակ	Fragaria		

Արեւածաղիկ	<i>Helianthus</i>		
Գարի	<i>Hordeum</i>		
Կարտոֆիլ՝ քաղցրիթոմոեա			
Տափոլոս	<i>Lathyrus</i>		
Ոսակ	<i>Lens</i>		
Խնձորեսի	<i>Malus</i>		
Մանիհոս	<i>Manihot</i>	Միայն <i>Manihot esculenta</i>	
Աղամաթզեսի՝ դեսերտային	<i>Musa</i>	Բացի <i>Musa textilis</i>	
Բրինձ	<i>Oryza</i>		
Կորեկ՝ մարգարտյա	<i>Pennisetum</i>		
Լոբի	<i>Phaseolus</i>		
Ոլոռ	<i>Pisum</i>		
Տարեկան	<i>Secale</i>		
Կարտոֆիլ	<i>Solanum</i>	Այդ թվում՝ պալարապտուղների խումբ՝ իբրա <i>Solanum phureja</i>	
Սմբուկ	<i>Solanum</i>	Այդ թվում՝ <i>melongena</i> խումբը	
Սորգոն	<i>Sorghum</i>		
Ցորենաշորան	<i>Triticosecale</i>		
Ցորեն	<i>Triticum</i> եւ այլն	Այդ թվում՝ <i>Agropyron, Elymus u Secale</i>	
Բակլա	<i>Vicia</i>		
Պորտիկ՝ չինական	<i>Vigna</i>		
Եգիպտացորեն	<i>Zea</i>	Բացի <i>Zea perennis, Zea diploperennis</i>     և <i>Zea luxurians</i>	

Կերեր

Տեղը		Տեսակը	
Կերային մշակաբույսեր			

Astragalus	chinensis, cicer, arenarius	
Canavalia	Ensiformis	
Coronilla	Varia	
Hedysarum	Coronarium	
Lathyrus	cicera, ciliolatus, hirsutus, ochrus, odoratus,  sativus	
Lespedeza	cuneata, striata, stipulacea	
Lotus	corniculatus, subbiflorus, uliginosus	
Lupinus	albus, angustifolius, luteus	
Medicago	arborea, falcata, sativa, scutellata, rigidula,  truncatula	
Melilotus	albus, officinalis	
Onobrychis	Viciifolia	
Ornithopus	Sativus	
Prosopis	affinis, alba, chilensis, nigra, pallida	
Pueraria	Phaseoloides	
Trifolium	alexandrinum, alpestre, ambiguum, angustifolium,  arvense, agrocicerum, hybridum, incarnatum,  pratense, repens, resupinatum, ruepellianum,  semipilosum, subterraneum, vesiculosum	
Կերայիլս խնութը		
Andropogon	Gayanus	
Agropyron	cristatum, desertorum	
Agrostis	stolonifera, tenuis	
Alopecurus	Pratensis	
Arrhenatherum	Elatius	
Dactylis	glomerata	
Festuca	arundinacea, gigantea, heterophylla, ovina,  pratensis, rubra	
Lolium	hybridum, multiflorum, perenne, rigidum, temulentum	
Phalaris	aquatica, arundinacea	

Phleum	pratense	
Poa	Alpina, annua, pratensis	
Tripsacum	Laxum	
Այլ կերային մշակաբույսեր		
Atriplex	halimus, nummularia	
Salsola	vermiculata	

## ՀԱՎԵԼՎԱԾ 11

ՍԱՍ |  
Արբիտրաժ  
ՀՈԴՎԱԾ 1

Յայցվոր կողմը ծանուցում է քարտուղարին այն մասին, որ վեճի մասնակից կողմերը փոխանցում են այն արբիտրաժային դատավարության՝ 22-րդ հոդվածին համաձայն: Ծանուցումը պարունակում է արբիտրաժային դատավարության առարկայի շարադրանքը եւ, մասնավորապես, սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնց մեկնարանումը կամ կիրառումը վեճ են առաջացրել: Եթե վեճի կողմերը համաձայնության չեն գալիս վեճի առարկայի շուրջ մինչեւ դատարանի Նախագահի նշանակումը, ապա առարկան որոշվում է արբիտրաժային տրիբունալով: Քարտուղարը այդ կերպով ստացված տեղեկատվությունը փոխանցում է սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմերին:

## ՀՈԴՎԱԾ 2

1. Վիճաբանող երկու կողմերի միջեւ առաջացած վեճի դեպքում արբիտրաժային տրիբունալը կազմվում է երեք անդամից: Յուրաքանչյուր վիճող կողմ նշանակում է մեկ արբիտրի, եւ այդ երկու արբիտրները փոխադարձ համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտրին, որը կատարում է դատարանի Նախագահի պարտականությունները: Վերջինս չի կարող լինել վիճող կողմերից որեւէ մեկի պետության քաղաքացի, չի կարող ունենալ իր բնակության վայրը կողմերից որեւէ մեկի տարածքում, չի կարող նրանց մոտ ծառայության մեջ գտնվել կամ ինչ-որ ձեռու կապ ունենալ այդ գործի հետ:

2. Երկուսից ավելի վիճաբանող կողմերի դեպքում կողմերը, որոնք ունեն ընդհանուր հետաքրքրություն, փոխադարձ համաձայնությամբ միասին նշանակում են մեկ արբիտր:

3. Ցանկացած թափուր պաշտոն լրացվում է համաձայն ընթացակարգի, որը նախատեսված է նախնական նշանակման համար:

## ՀՈԴՎԱԾ 3

1. Եթե երկրորդ արբիտրի նշանակումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, չի նշանակվում արբիտրաժային դատարանի Նախագահ, ապա, վիճող կողմերից որեւէ մեկի ինդրանքով, ՊԳԿ-ի Գլխավոր տնօրենն իսքև է նշանակում նախագահ հետագա երկու ամիսների ընթացքում:

2. Եթե վիճաբանող կողմերից մեկը չի նշանակում արբիտր ինդրանքը ստանալուց

հետո երկու ամսվա ընթացքում, մյուս կողմը կարող է այդ մասին տեղեկացնել ՊԳԿ-ի Գլխավոր տնօրենին, որը կատարում է նշանակումը հետագա երկու ամիսների ընթացքում:

#### ՀՈԴՎԱԾ 4

Արբիտրաժային տրիբունալը իր որոշումները կայացնում է միջազգային իրավունքի նորմերին եւ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

#### ՀՈԴՎԱԾ 5

Եթե վիճաբանող կողմերը այլ համաձայնության չեն եկել, արբիտրաժային տրիբունալը որոշում է ընթացակարգի իր սեփական կանոնները:

#### ՀՈԴՎԱԾ 6

Արբիտրաժային տրիբունալը, վեճի կողմերից մեկի խնդրանքով, կարող է առաջարկել պաշտպանության ժամանակավոր անհրաժեշտ միջոցներ:

#### ՀՈԴՎԱԾ 7

Վիճաբանող կողմերը դյուրացնում են արբիտրաժային տրիբունալի աշխատանքը, մասնավորապես, կիրառելով իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները.

ա) Ներկայացնում են գործին առնչվող բոլոր փաստաթղթերը, տեղեկատվությունը եւ օբյեկտները, եւ

բ) անհրաժեշտության դեպքում հնարավորություն են տալիս իրավիրել վկաներ կամ փորձագետներ եւ ծանոթանալ նրանց տրված ցուցմունքներին:

#### ՀՈԴՎԱԾ 8

Վիճաբանող կողմերը եւ արբիտրները պարտավոր են ապահովել ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը, որը նրանք ստանում են գաղտնի կարգով արբիտրաժային տրիբունալի դատավարության ժամանակ:

#### ՀՈԴՎԱԾ 9

Եթե արբիտրաժային տրիբունալը չի ընդունում այլ որոշում՝ ելելով գործի առանձնահատուկ հանգամանքներից, դատական ծախսերը հավասարապես բաշխվում են վիճող

կողմերի միջեւ: Տրիբունալը գրանցում է իր բոլոր ծախսերը եւ կողմերին ներկայացնում է վերջնահաշվարկ այդ ծախսերի վերաբերյալ:

#### ՀՈԴՎԱԾ 10

Ցանկացած Պայմանավորվող կողմ, որը վեճի առարկայի նկատմամբ ունի իրավական բնույթի շահ, եւ որը կարող է ազդել գործի որոշման վրա, իրավունք ունի տրիբունալի համաձայնությամբ միջամտելու գործի դատաքննությանը:

#### ՀՈԴՎԱԾ 11

Տրիբունալը կարող է լսել հակընդդեմ հայցեր, որոնք անմիջականորեն բխում են վեճի առարկայից, եւ դրանց վերաբերյալ որոշումներ կայացնել:

#### ՀՈԴՎԱԾ 12

Արքիտրաժային տրիբունալի որոշումները, որոնք վերաբերում են ընթացակարգի հարցերին եւ գործի եռթյանը, ընդունվում են նրա անդամների ծայների մեջամասնությամբ:

### ՀՈԴՎԱԾ 13

Եթե վեճի կողմերից մեկը չի ներկայանում արքիտրաժային տրիբունալ կամ չի պաշտպանում իր գործը, ապա մյուս կողմը կարող է խնդրել տրիբունալին շարունակել դատավարությունը եւ կայացնել որոշում։ Վեճի կողմերից մեկի բացակայությունը կամ իր գործը պաշտպանելու նրա անկարողությունը խոչընդոտ չի հանդիսանում դատաքննության համար։ Միևնույն վերջնական որոշումը կայացնելը արքիտրաժային տրիբունալը պետք է համոզված լինի, որ հարցը համարվում է փաստացիորեն եւ իրավաբանորեն բավականաչափ հիմնավորված։

### ՀՈԴՎԱԾ 14

Տրիբունալի վերջնական որոշումը կայացվում է նրա վերջնական սահմանման օրից հետո՝ հինգ ամսվա ընթացքում, եթե նա անհրաժեշտ չի համարում երկարացնել այդ ժամկետը եւս մեկ ժամանակաշրջանով, որի տեւողությունը չպետք է գերազանցի հինգ ամիսը։

### ՀՈԴՎԱԾ 15

Արքիտրաժային տրիբունալի վերջնական որոշումը սահմանվում է վեճի առարկայով եւ ուղեկցվում է փաստարկների բացատրությամբ, որոնց վրա այն հիմնված է։ Այն ներառում է այն անդամների անունները, որոնք մասնակցել են որոշման կայացմանը, ինչպես նաև նշվում է վերջնական որոշման ընդունման ամսաթիվը։ Տրիբունալի ցանկացած անդամ կարող է վերջնական որոշմանը կցել առանձին կամ տարբերվող կարծիք։

### ՀՈԴՎԱԾ 16

Տրիբունալի որոշումը պարտադիր է վեճի կողմերի համար։ Այն բողոքարկման ընթակա չէ, եթե վեճի կողմերը նախապես չեն պայմանավորվել բողոքարկման ընթացակարգի մասին։

### ՀՈԴՎԱԾ 17

Ցանկացած տարածայնություն, որը կարող է առաջանալ վեճի կողմերի միջեւ, եւ որը վերաբերում է տրիբունալի վերջնական որոշման կատարման կարգին կամ մեկնաբանությանը, կարող է վիճող կողմերից որեւէ մեկի կողմից փոխանցվել արքիտրաժային տրիբունալի քննությանը, որը կայացրել է այդ որոշումը։

### ՄԱՍ II

#### Հաշտեցում

#### ՀՈԴՎԱԾ 1

Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվում է վիճաբանող կողմերից մեկի խնդրանքով։ Եթե կողմերը այլ համաձայնության չեն գալիս, այդ հանձնաժողովը կազմվում է հինգ անդամներից՝ յուրաքանչյուր շահագրգիռ կողմերի երկուական անդամից, որոնք միասին ընտրում են Նախագահ։

### ՀՈԴՎԱԾ 2

Եթե վիճաբանող Պայմանավորվող կողմերի թիվն ավել է երկուսից, վիճաբանող

կողմերը, որոնք ունեն ընդհանուր շահեր, փոխադարձ համաձայնությամբ միասին նշանակում են հանձնաժողովի իրենց անդամներին: Եթե վիճաբանող երկու կամ ավելի կողմերն ունեն առանձին հետաքրքրություններ, կամ երբ բացակայում է նույն շահերին վերաբերող համաձայնությունը, ապա անդամները նշանակվում են առանձին:

### ՀՈԴՎԱԾ 3

Եթե վիճաբանող կողմերը որեւէ նշանակում չեն կատարում հաշտեցման հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ խնդրանքի ներկայացման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում, ապա ՊԳԿ-ի Գլխավոր տնօրենը վիճաբանող կողմերի դիմումի դեպքում կատարում է այդ նշանակումները հետագա երկու ամիսների ընթացքում:

### ՀՈԴՎԱԾ 4

Եթե հաշտեցման հանձնաժողովի Նախագահը չի ընտրվել հանձնաժողովի վերջին անդամի նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում, ՊԳԿ-ի Գլխավոր տնօրենը վիճող կողմերից մեկի համապատասխան դիմումի առկայության դեպքում նշանակում է Նախագահ հաջորդ երկու ամիսների ընթացքում:

### ՀՈԴՎԱԾ 5

Հաշտեցման հանձնաժողովն իր որոշումները կայացնում են իր անդամների ծայների մեջամասնությամբ: Նա սահմանում է իր սեփական ընթացակարգը, եթե վիճաբանող կողմերն այլ կերպ չեն որոշում: Նա ընդունում է առաջարկ վեճի լուծման համար, որը կողմերը բարեխղճորեն ուսումնասիրում են:

### ՀՈԴՎԱԾ 6

Հաշտեցման հանձնաժողովի իրավասությունների վերաբերյալ տարածայնություններ առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի կողմից:

Հայաստանի Հանրապետության համար Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2007թ. հունիսի 18-ին: